

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**

**ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-16  
ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով շինանյութերի ձեռքբերման  
գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**

ք. Երևան

30 հոկտեմբերի 2017 թ.  
ժամը. 14:30

**Մասնակցում էին.**

- |                        |   |
|------------------------|---|
| Հանձնաժողովի նախագահ՝  | <b>Ա. Թադևոսյան</b> (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)   |
| Անդամներ՝              | <b>Ա. Ջալադյան</b> (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)<br><b>Մ. Մելքոնյան</b> (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)<br><b>Ն. Համբարձումյան</b> (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)<br><b>Բ. Եղիզարյան</b> (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ) |
| Հանձնաժողովի քարտուղար | <b>Ն. Նիկողոսյան</b> (համակարգում՝ ԳՊ/ՄՀՎ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող )  |

**1. Հայտերի բացման մասին**

«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով շինանյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 2017 թվականի հոկտեմբերի 30-ին ժամը 14:30-ին ք. Երևան Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ հասցեում:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց շինանյութերի գնման նախահաշվային գները մեկ թվով արտահայտված՝

Զ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Խմելու ջրի խողովակաշար	7200
2	Սալիկ, կերամիկական, հատակի համար	275000
3	Զուգարանակոնք	35000
4	Ջրի պոմպ	35000
5	Ջրի ծորակ, փական	13000
6	Լվացարան	23000

**1.1. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը**

«ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին [www.armeps.am](http://www.armeps.am) էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Գտնվելու վայրը
1	«Էկոմիքս» ՍՊԸ	ք. Երևան, Բաբաջանյան 60/2

**1.2 Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:**

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

**1.3 Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:**

«Էկոմիքս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

**1.4 Մասնակցի առաջարկած գինը**

(ՀՀ դրամ)

Չ/Հ	Չափաբաժինների անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
1	Խմելու ջրի խողովակաշար	3230	3876
2	Սալիկ, կերամիկական, հատակի համար	448983,33	538780
3	Զուգարանակոնք	26246,67	31496
4	Ջրի պոմպ	53163,33	63796
5	Ջրի ծորակ, փական	5663,33	6796
6	Լվացարան	16246,67	19496

**1.5 Հայտերի գնահատման մասին:**

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակցի փաստաթղթերը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց:

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

«Էկոմիքս» ՍՊ ընկերության հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

**1.6 Բանակցությունների վարման մասին:**

Համեմատելով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը նախահաշվային գնի հետ՝ պարզվեց, որ 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով մասնակցի առաջարկած գինը գերազանցում է նախահաշվային գինը: Այդ չափաբաժինների մասով անհրաժեշտ է մասնակցին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

**1.7 Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:**

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1, 3, 5 և 6 չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էկոմիքս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0

**1.8 «ՀՀԷԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՊՁԲ-Ջ-16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:**

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է կողմ-5 դեմ-0







**2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին**

---

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել բանակցությունների վարման մասին ծանուցումը բավարար գնահատված մասնակցին՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ին, ծանուցելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ օրը ժամը 11:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, խորհրդակցությունների սրահ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Թադևոսյան
Անդամներ՝		Ա. Զալադյան
		Մ. Մելքոնյան
		Ն. Համբարձումյան
		Բ. Եղիգարյան
Հանձնաժողովի քարտուղար		Ն. Նիկոլայան